ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան	03.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/140

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Էլ-Սթրոյ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի 10 վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում,
2. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8195-2020 գրությամբ «Էլ-Սթրոյ»

ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.06.2020թ.-ի թիվ 01/61-8800 գրության հիման վրա, 04.06.2020թ.-ին «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 04.06.2020թ.-ին:

04.06.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/140 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

11.06.2020թ.-ին, 24.06.2020թ.-ին և 03.07.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.07.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 01.06.2020թ.-ի թիվ 01/61-8800 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել են «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» և «ԵՔ-ԲՄԾՁԲ- 20/70» ծածկագրերով գնման ընթացակարգեր:

Ընթացակարգերին մասնակցության հայտ է ներկայացրել «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից): Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների որոշմամբ վերոնշված ընթացակարգերի ընտրված մասնակից է ճանաչվել «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն:

Օրենքով սահմանված կարգով Մասնակցին ներկայացվել են պայմանագրեր կնքելու առաջարկներ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել համապատասխան պայմանագրերը, որակավորման և պայմանագրերի ապահովումները:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, Պատվիրատուն կից ներկայացրել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրերով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 04.06.2020թ.-ին գրությամբ դիմել է «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8195-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն 09.06.2020թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրերով գնանշման հարցման գնման ընթացակարգերին և ճանաչվել ընտրված մասնակից վերոնշված ընթացակարգերի մասով:

Այնուհետև Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից որոշում է կայացվել «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկներ:

Սակայն հետագայում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում, այն է՝ տաս աշխատանքային օրվա օրվա

ընթացքում պատվիրատուին չի ներկայացրել համապատասխան պայմանագրերը, որակավորման և պայմանագրերի ապահովումները, ինչի արդյունքում «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10.2 կետի՝ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով:

Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով (հավելված 4), որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրով (համաձայնագրով) ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

Նույն Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10.3 կետի՝ Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝

«47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:».

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Ընթացակարգի հրավերի 8.10 կետի համաձայն, եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ կառավարության կողմից 2020թ. մարտի 16-ին ընդունվել է թիվ 298-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Վերոհիշյալ որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվել է արտակարգ դրություն, որը երկարաձգվել է մինչև 2020թ. մայիսի 14-ը, այնուհետև համապատասխան որոշումներով այն երկարաձգվել նաև մինչև հուլիսի 14-ը, որի պարագայում երկրում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ գրեթե անհնարին է դարձել /առձեռն/ փաստաթղթաշրջանառությունը պետական հաստատությունների հետ, դեռ ավելի համատարած խնդիրներ առաջացել նաև ՀՀ-ում գործող բանկային երաշխիքների տրամադրման գործընթացում, որի պարագայում գրեթե 3 ամիս առաջացել են նմանատիպ խնդիրներ բոլոր մրցույթների շրջանակներում:

Ավելին՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթներում արդեն իսկ քննվել բազմաթիվ նմանատիպ գործեր, որի պարագայում բողոքներ քննող անձի կողմից քննարկվել են ՀՀ-ում արտակարգ դրության ժամանակահատվածում՝ մասնակիցներին վերագրվող Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման դեպքերը:

Արդյունքում նման ոչ իրավաչափ եղանակով Ընկերության հայտը մերժելը նաև ոչ իրավաչափորեն հանգեցեցրել է «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»:

4. <u>ՍՑ-LO-2020/140 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի 10 վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.03.2020թ.-ին և Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 19.03.2020թ.-ին հայտարարվել են համապատասխանաբար թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրերով գնման ընթացակարգեր (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն:

iii. «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրերով գնման ընթացակարգերի հրավերներով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 27.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» ծածկագրով ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված առաջարկ ներկայացրած մասնակից:

v. Պատվիրատուն 12.05.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28-2» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան ներկայացնել Մասնակցի կողմից կնքված պայմանագիրը, որակավորման ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով և պայմանագրի կատարման ապահովում, նշված ժամկետում չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

vi. թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.05.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 12.05.2020թ.-ին Մասնակցին ներկայացվել էր պայմանագիր կնքելու առաջարկ: Վերջինս պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 25.05.2020թ.-ը) պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որը Մասնակցի կողմից չի տրամադրվել: Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

vii. թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված առաջարկ ներկայացրած մասնակից:

viii. Պատվիրատուն 08.05.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ անհրաժեշտ է սույն ծանուցումը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում պատվիրատուին ուղղված գրությամբ Երևանի քաղաքապետարան ներկայացնել Մասնակցի կողմից կնքված պայմանագիրը, որակավորման ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով և պայմանագրի կատարման ապահովում, նշված ժամկետում չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

ix. թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.05.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 08.05.2020թ.-ին Մասնակցին ներկայացվել էր պայմանագիր կնքելու առաջարկ: Վերջինս պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 22.05.2020թ.-ը) պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որը Մասնակցի կողմից չի տրամադրվել: Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8195-2020 գրությամբ «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով

նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի

կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի 10 վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 12.03.2020թ.-ին և Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 19.03.2020թ.-ին հայտարարված համապատասխանաբար թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրերով գնման ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից, որպես բավարար գնահատված առաջարկ ներկայացրած մասնակից:

Մասնակիցը, սակայն, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին չի ներկայացնել թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրերով գնման ընթացակարգերի շրջանակներում պայմանագրերի նախագծերի հաստատված տարբերակը, որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է թիվ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/70» ծածկագրերով գնման ընթացակարգերի հրավերներով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ ՀՀ կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրություն պարագայում երկրում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ գրեթե անհնարին է դարձել /առձեռն/ փաստաթղթաշրջանառությունը պետական հաստատությունների հետ, դեռ ավելի համատարած խնդիրներ առաջացել նաև ՀՀ-ում գործող բանկային երաշխիքների տրամադրման գործընթացում, որի պարագայում գրեթե

երեք ամիս առաջացել են նմանատիպ խնդիրներ բոլոր մրցույթների շրջանակներում, ապա ուսումնասիրելով վերոնշյալ փաստերը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ պետական մարմինները փաստաթղթաշրջանառությունը իրականացրել են նաև էլեկտրոնային եղանակով, որպիսի պայմաններում, Մասնակցի կողմից մատնանշված առձեռն փաստաթղթաշրջանառության հետ կապված դժվարությունները չէին կարող խոչընդոտ հանդիսանալ պայմանագիր, պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելուն:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված գործող բանկային երաշխիքների տրամադրման գործընթացում առկա խնդիրներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենսդիրը պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանել է այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, որն ինքնանպատակ չէ և դա այն օբյեկտիվ ժամանակահատվածն է, երբ գնման գործընթացի ընտրված մասնակիցը ցանկության դեպքում կարող է իրացնել Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, **եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի

հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Բողոքաբերի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի հունիսի 13-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքը օբյեկտիվորեն չէր կարող ազդել Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման վրա:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Մասնակցի կողմից դիրքորոշմամբ չներկայացվեցին բավարար փաստեր ու հանգամանքներ, որոնց առկայության պարագայում հնարավոր կլիներ հաստատված համարել արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքի՝ Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման վրա օբյեկտիվորեն ազդելու փաստի մասին: Մասնակցի կողմից չներկայացվեց կոնկրետ որևէ գործողություն, որը հաղթահարելը, պայմանավորված արտակարգ դրությամբ, օբյեկտիվորեն եղել է անհնարին՝ կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում:

Այսպիսով, վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության, ինչպես նաև Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հետ համադրման արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8195-2020 գրությամբ «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/140 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էլ-Սթրոյ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ